ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/116

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.03.2022թ. թիվ 26/26-1/5201-2022 գրությամբ «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 18.03.2022թ. թիվ 08 գրության հիման վրա, 28.03.2022թ. թիվ 26/26-1/5201-2022 գրությամբ նախաձեռնել է «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Շամս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Շամս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Շամս Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/116 ընթացակարգի շրջանակներում 01.04.2022թ. ժամը 09:13-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.03.2022թ. թիվ 08 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջներով, ներկայացվում է «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/116 ընթացակարգի շրջանակներում 01.04.2022թ. ժամը 09:13-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/116 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/116 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 15.02.2022թ. կնքվել է թիվ «ՍՀՀՄ-ԳՀԱՊՁԲ-22/2» ծածկագրով «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝

Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքները պետք է մատակարարվեն պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 3 (երեք) ամիս՝ ըստ ժամանակացույցի:

3. «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Մատակարարման ժամանակացույց՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.04.2022թ.	Չափման միավոր	Ընդհանուր քանակը
1	Կաղամբ	Շաբաթը մեկ անգամ	կգ	300
2	Արևածաղկի ձեթ	Ամիսը 2 անգամ	կգ	100
3	Թթվասեր	Շաբաթը մեկ անգամ	կգ	40
4	Կաթնաշոռ	Շաբաթը մեկ անգամ	կգ	20
5	Կաթ	Շաբաթը մեկ անգամ	կգ	300
6	Մածուն	Շաբաթը մեկ անգամ	կգ	450
7	Կերակրի աղ	Ամիսը 1 անգամ	կգ	60
8	Թեյ	Ամիսը 1 անգամ	կգ	0.8
9	Բրինձ	Ամիսը 2 անգամ	կգ	90
10	Հնդկաձավար	Ամիսը 2 անգամ	կգ	60
11	Տոմատի մածուկ	Ամիսը 1 անգամ	կգ	40
12	Ձու	Շաբաթը 1 անգամ	հատ	1800
13	Գազար	Շաբաթը 1 անգամ	կգ	45
14	Ցորենաձավար	Ամիսը 2 անգամ	կգ	60
15	Դեղին ոլոռ	Ամիսը 2 անգամ	կգ	15
16	Տավարի միս	Շաբաթը 1 անգամ	կգ	250
17	Պանիր լոռի	Ամիսը 2 անգամ	կգ	25
18	Խնձոր	Շաբաթը 1 անգամ	կգ	100
19	Ջեմ	Ամիսը 2 անգամ	կգ	40
20	Բանան	Շաբաթը 1 անգամ	կգ	80
21	Պահածոյացված ոլոռ	Ամիսը 1 անգամ	կգ	40
22	Այլուր	Ամիսը 2 անգամ	կգ	100
23	Հավի կրծքամիս	Շաբաթը 1 անգամ	կգ	90
24	Սպիտակաձավար/մանի	Ամիսը 2 անգամ	կգ	5
25	Ոսպ	Ամիսը 2 անգամ	կգ	45
26	Շոկոլադապատ կոնֆետ	Ամիսը 2 անգամ	կգ	20
27	Նարինջ	Շաբաթը 1 անգամ	կգ	40
28	Հատիկ լոբի	Ամիսը 2 անգամ	կգ	8

4. Պատվիրատուի կողմից «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին ստորև նշված ապրանքների ցանկով և քանակով 04.03.2022թ. ներկայացվել է սննդի մատակարարման պահանջագիր.

ՀՀ	Սննդի անվանումը	Քանակ
1	Ոլոռ պահածոյացված	15կգ
2	Ձու 2 համարի	180հ
3	Տոմատ	10կգ

4	Շոկոլադ կանֆետ	8կգ
5	Ջեմ ռազմագ	10կգ
6	Բանան	15կգ
7	Միս տավարի	25կգ
8	Թթվասեր Մարիանա	3կգ
9	Կաթնաշոռ Մարիանա	3կգ
10	Կաթ Մարիանա	24կգ
11	Մածուն Մարիանա	25կգ
12	Թեյ	0,3
13	Հավի կրծքամիս	15կգ
14	Նարինջ	7կգ
15	Հնդկաձավար	25կգ

5. Պատվիրատուն «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 07.03.2022թ. թիվ 5 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ 2022թ. փետրվարի 15-ին կնքված պայմանագրի համաձայն.

Վաճառողին՝ «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին մարտի 4-ին ներկայացվել է պահանջագիր, որի համաձայն ապրանքի մատակարարումը պիտի կատարվեր այսօր՝ 07.03.2022թ.:

Պարզաբանում եմ՝

Պահանջագրով նախատեսված ապրանքներից ոչ մեկը չի մատակարարվել»:

6. Պատվիրատուն «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 11.03.2022թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, այսուհետ «Գնորդ» «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի, այսուհետ «Վաճառող» միջև 15.02.2022թ. կնքված ՍՀՀՄ-ԳՀԱՊՁԲ-22/2 պայմանագրի 1.1 համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հեռախոսազանգերի, ծանուցագրերի միջոցով և բանավոր կերպով բազմիցս զգուշացրել է Վաճառողին՝ ապրանքները պահանջագիր ներկայացնելուց հետո սահմանված ժամկետներում մատակարարելու համար, սակայն վերջինիս կողմից միջոցներ չեն ձեռնարկվել ապրանքները պատշաճ որակով և ժամկետներում մատակարարելու ուղղությամբ»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 2022 թվականի մարտի 11-ից միակողմանի լուծում է «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի հետ 15.02.2022թ. կնքված ՍՀՀՄ-ԳՀԱՊՁԲ-22/2 պայմանագիրը (...)»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 11.03.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.03.2022թ. թիվ 26/26-1/5201-2022 գրությունը, «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 18.03.2022թ. թիվ 08 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 15.02.2022թ. կնքվել է թիվ «ՍՀՀՄ-ԳՀԱՊՁԲ-22/2» ծածկագրով «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքները պետք է մատակարարվեն պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 3 (երեք) ամիս՝ ըստ ժամանակացույցի:

«Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Մատակարարման ժամանակացույց՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.04.2022թ.	Չափման միավոր	Ընդհանուր քանակը
1	Կաղամբ	Շաբաթը մեկ անգամ	կգ	300
2	Արևածաղկի ձեթ	Ամիսը 2 անգամ	կգ	100
3	Թթվասեր	Շաբաթը մեկ անգամ	կգ	40
4	Կաթնաշոռ	Շաբաթը մեկ անգամ	կգ	20
5	Կաթ	Շաբաթը մեկ անգամ	կգ	300
6	Մածուն	Շաբաթը մեկ անգամ	կգ	450
7	Կերակրի աղ	Ամիսը 1 անգամ	կգ	60
8	Թեյ	Ամիսը 1 անգամ	կգ	0.8
9	Բրինձ	Ամիսը 2 անգամ	կգ	90
10	Հնդկաձավար	Ամիսը 2 անգամ	կգ	60
11	Տոմատի մածուկ	Ամիսը 1 անգամ	կգ	40
12	Ձու	Շաբաթը 1 անգամ	հատ	1800
13	Գազար	Շաբաթը 1 անգամ	կգ	45
14	Ցորենաձավար	Ամիսը 2 անգամ	կգ	60
15	Դեղին ոլոռ	Ամիսը 2 անգամ	կգ	15
16	Տավարի միս	Շաբաթը 1 անգամ	կգ	250
17	Պանիր լոռի	Ամիսը 2 անգամ	կգ	25
18	Խնձոր	Շաբաթը 1 անգամ	կգ	100
19	Ջեմ	Ամիսը 2 անգամ	կգ	40
20	Բանան	Շաբաթը 1 անգամ	կգ	80
21	Պահածոյացված ոլոռ	Ամիսը 1 անգամ	կգ	40
22	Այլուր	Ամիսը 2 անգամ	կգ	100
23	Հավի կրծքամիս	Շաբաթը 1 անգամ	կգ	90
24	Սպիտակաձավար/մանի	Ամիսը 2 անգամ	կգ	5
25	Ոսպ	Ամիսը 2 անգամ	կգ	45
26	Շոկոլադապատ կոնֆետ	Ամիսը 2 անգամ	կգ	20
27	Նարինջ	Շաբաթը 1 անգամ	կգ	40
28	Հատիկ լոբի	Ամիսը 2 անգամ	կգ	8

Պատվիրատուի կողմից «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին ստորև նշված ապրանքների ցանկով և քանակով 04.03.2022թ. ներկայացվել է սննդի մատակարարման պահանջագիր.

ՀՀ	Սննդի անվանումը	Քանակ
1	Ոլոռ պահածոյացված	15կգ
2	Ձու 2 համարի	180հ
3	Տոմատ	10կգ
4	Շոկոլադ կանֆետ	8կգ
5	Ջեմ ռազմագ	10կգ
6	Բանան	15կգ
7	Միս տավարի	25կգ
8	Թթվասեր Մարիանա	3կգ
9	Կաթնաշոռ Մարիանա	3կգ
10	Կաթ Մարիանա	24կգ
11	Մածուն Մարիանա	25կգ
12	Թեյ	0,3
13	Հավի կրծքամիս	15կգ
14	Նարինջ	7կգ
15	Հնդկաձավար	25կգ

Պատվիրատուն «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 07.03.2022թ. թիվ 5 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ 2022թ. փետրվարի 15-ին կնքված պայմանագրի համաձայն.

Վաճառողին՝ «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին մարտի 4-ին ներկայացվել է պահանջագիր, որի համաձայն ապրանքի մատակարարումը պիտի կատարվեր այսօր՝ 07.03.2022թ.:

Պարզաբանում եմ՝

Պահանջագրով նախատեսված ապրանքներից ոչ մեկը չի մատակարարվել»:

Պատվիրատուն «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 11.03.2022թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, այսուհետ «Գնորդ» «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի, այսուհետ «Վաճառող» միջև 15.02.2022թ. կնքված ՍՀՀՄ-ԳՀԱՊՁԲ-22/2 պայմանագրի 1.1 համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հեռախոսազանգերի, ծանուցագրերի միջոցով և բանավոր կերպով բազմիցս զգուշացրել է Վաճառողին՝ ապրանքները պահանջագիր ներկայացնելուց հետո սահմանված ժամկետներում մատակարարելու համար, սակայն վերջինիս կողմից միջոցներ չեն ձեռնարկվել ապրանքները պատշաճ որակով և ժամկետներում մատակարարելու ուղղությամբ»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 2022 թվականի մարտի 11-ից միակողմանի լուծում է «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի հետ 15.02.2022թ. կնքված ՍՀՀՄ-ԳՀԱՊՁԲ-22/2 պայմանագիրը (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 11.03.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է</u>***

<u>պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Շամս Գրուպ» ՍՊԸ-ն խախտել է իր և «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի միջև 15.02.2022թ. կնքված թիվ «ՍՀՀՄ-ԳՀԱՊՁԲ-22/2» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.03.2022թ. թիվ 26/26-1/5201-2022 գրությամբ «Շամս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**